փաթ 1 շրջեցան, ոմանք շալիկներու թեւերու ծայրը, իսկ ոմանք խունչաններու ծայրն վառեցին՝ ծուխի ընթացքի վրան գուշակութիւն արին։

Դեռ ձմեռն իւր ընթացք կը շարունակէ, պարզ գիշերն աւելի սաստիկ է ցուրտն քան Դեկտեմ. և Յունվար. մենք կըսպասէինք Փետրուարի վերջին օրին, որ Շուտտաճանի 2 գործողութիւնը կատարենք։ Այն ևս եկաւ, մեր երդիքներու վերայ և դռներու առաջ ակիշով 3 գիծ քաշեցինք, մտանք տուն, սխտոռ և գոմ, ամեն անկիւն ծակ ու ծուկ մորթով մի հարուած տուինք, «Շւոտ ի դուրս, Մարտ ի ներս» ասացինք, արտաքսեցինք սպառող անհաշիւ Շւոտներն, որոց փոխարէն հիւրընկալեցինք տունը բարեօք լեցնող Դոլվաթներն, որոց տեղ տուինք մեր տան մէջ գտնուած լաւ լաւ անասուններու մսուրքներու մէջ ևլն. սակայն դարձեալ ձեան խաւը օր քան զօր կը թանձրանայ, կարծես թէ միտք չունի գարուն բացուելու։

Մարտ մէկին. «եղուրջ վըր թառին» կասէին մեր գիւղի հասարակութիւնը ու դէպի դաշտ կը նայէին խմբով։ Որոց դէմքը ուրախ էր, գարնան մի նշանը տեսած էին—մարդիկ ձեան վերայ ամեն կողմով կը գային առանց ձեան մէջ խոթուելու. ձեան երեսը արեգակն կակղացուցած՝ գիշերուան «պարզկէն» սառեցուցած էր, եղած էր ամուր երկաթ։ Ուրախ էին ճանապարհորդներն, որ եօթ. տաս օրի չափ հարթ հաւասար Թօ--րշէ կամ Եղ--րջէ վերայից պիտի քայլէին առանց արգելքի։

«Մարտ էրկըսին, դարման վըրկիսին»։

«Մարտ վեց, ձիւն վըր ձեան ցեց», ասացին։ Ես տեսայ այս անգամ խոշոր շլոփան որ կը տեղար ձեան խաւի վերայ, յիրաւի դա ևս ձիւն էր, սակայն քըքըրեց իւր ներքևի եղուրջըն, արաւ սրսուր $^1/_{100}$ մեթր հաստութեամբ $^1/_{10}$ մեթր երկա-

---

1, Մի բանի շուղը մի անգամ ղառնալուն փաթ կասեն, երկու անգամին՝ երկու փաթան, ևլն։

2, Շուտտաճանի գործողութիւնը հեթանոսական մի սովորութիւն է, որ Բագրեւանդայ մէջ փետրուարի երկոյին կը կատարեն, որոյ վերայ ընդարձակ գրած եմ։

3, Ակիշը 1 $^1/_2$ կանգնոյ չափ երկաթեայ ցող մի է և ծայրը կեռ, որով թոնդիրէն կրակ, տաք անօթներ ևլն. կը վերցնեն։